

1767

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐ

ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԿՐՈՐԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՆԸ 85 ԿՈՄԵԿ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

74
S-26

Լ Ո Ւ Ս Հ Ր Ա Տ



Խմբագիր՝ Զ. ԱՃԵՄՅԱՆ
 Տեխ. խմբագիր՝ Յ. ՉԱԽԱԼՅԱՆ
 Սրբագրիչ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ
 Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. ՊԱՐՈՆԻԿՅԱՆ
 Գլավիտի լիազոր 2—1158, հրատ. № 35, պատվեր № 122, տիրած 1500

Լուսհրատի տպարան, Յերևան, Տերյան 127

ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ *)

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

Տարրական դպրոցում նկարչության խնդիրն է՝ տալ սովորողներին այն հմտությունը և ունակությունները, վորոնք նրանց անհրաժեշտ են շրջապատող առարկաները գրագետ կերպով պատկերելու համար:

Ուստի ուսուցիչը սխտեմատիկ առաջադրությունների միջոցով պետք է յերեխաներին սովորեցնի տեսնելու և դիտելու իրենց շրջապատող առարկաները, ճշտի առարկաների ձևի և գույնի վերաբերյալ նրանց ունեցած պատկերացումները, յերեխաներին զինի տեխնիկական նախնական ունակություններով մատիտով ու ներկերով աշխատելու մեջ և հիմնական տարրական կանոնների դիտելիքներով, վորոնք անհրաժեշտ են նրանց ծանոթ, պարզ առարկաները պատկերելու համար:

Վերոհիշյալից յելնելով, տարրական դպրոցի նկարչության ուսուցման դասընթացը կազմվում է հետևյալ բաժիններից՝

1. ամենահասարակ վարժություններ՝ մատիտով և ներկերով աշխատելու տարրական տեխնիկական զարգացնելու համար, վորտեղ մտնում է ննախը կազմելու զանազան վարժություններ:
2. Առանձին առարկաների և առարկաների խմբերի նկարումը դիտողությամբ և բնականից:
3. Նկարչություն զանազան թեմաներով՝ հիշողությամբ և պատկերացումով:

Առանձին առարկաների դիտողությամբ ուրվագծումը սկսվում է 1-ին դասարանից և հանդիսանում է վորպես առանձին առարկաներ և առարկաների խմբեր բնականից նկարելու նախապատրաստական աշխատանք, այսինքն, վորպես մեթոդ, վորն ոգնում է յերեխային սովորել առարկան տեսնել, վերլուծել նրա

*) Ծրագիրը կազմել են Գեղարվեստական դաստիարակության Կենտր. Տան աշխատակիցներ՝ Յե. Կոնդախչյանը, Գ. Լարունսկայան և Յե. Ռոժկովան:

ձևը, հիշել այն և հասկանալ առարկաները պատկերելու հիմնական կանոնները:

Շատ կարևոր է հենց սկզբից խիստ հետևել յերեխայի ձիշտ նստվածքին, հետևել, թե ինչպես է բռնում մատիտը, ինչպես է նրա առջ զրված տետրակը և այլն: Առանձին առարկաների ուրվագծման բոլոր առաջադրանքները պետք է կատարվին բավականին խոշոր նկարների ձևով (մեկ եջի վրա 2—3 առարկա) և, տետրերում նկարելու հետ զուգընթաց, յերեխաների կողմից կատարվեն նաև դասարանական զբոսախոսակի վրա:

Առանձին առարկաներն ինչպես դիտողութայամբ, այնպես և բնականից նկարելիս յերեխեոր հանդիսանում է առարկայի ձևի և կազմության վերլուծումը:

Դիտողութայամբ առանձին առարկաների ուրվագծումները կատարվում են հետևյալ կերպ՝

Ուսուցիչը վաղորդք ջոկում է նկարելու առարկաները և բերում է դասարան. առարկան նա ցույց է տալիս ամբողջ դասարանին և ոժանդակ հարցերի միջոցով ոգնում է յերեխաներին ճանաչելու նրա ձևը (ի՞նչ մասերից է նա կազմված, ի՞նչն է նրա մեջ ավելի—լայնությունը, թե՞ բարձրությունը, խորություն ունի, թե՞ վոչ և այլն):

Սովորաբար մեկ դասում այդ կերպ կարելի յի 2—3 առարկաների ուրվագծումներ կատարել:

Սկսած 3-րդ դասարանից՝ մտցվում է բնականից նկարելը առարկայի պատկերելը վորոշ հայացքակետից: Այստեղ ուսուցիչը պետք է սովորողի ուշադրությունը հրավիրի առարկայի դիրքից կախված նրա ձևի տեսանելի փոփոխումների վրա. որինակ՝ զլանածև առարկայի (բաժակ, գավաթ, դույլ, թմբուկ և այլն) հիմքերի և ուղղանկյունածև առարկաների (տուփ, արկղ, հաստ գիրք) նիստերի փոփոխման վրա: Դա կոգնի աշակերտներին յուրացնել ծավալային առարկաներ, ինչ դիրքով վոր նրանք յերևում են նկարողի նստած տեղից, զբազետ կերպով պատկերելու հիմնական որենքները:

3-րդ և 4-րդ դասարաններում աշխատանքի այս ձևը պետք է առաջնորդող հանդիսանա ինչպես նրան հատկացված ժամերի քանակի, այնպես և իր նշանակության տեսակետից:

Բնականից և դիտողութայամբ նկարելու համար ծրագրում տրված առարկաների մոտավոր ցուցակը կազմված է մեծ մասամբ այնպիսի առարկաներից, վորո՞ւք լինում են գլորոցում:

Առանձին առարկաներ բնականից նկարելիս, պետք է սկզբնակ կլոր և զլանածև առարկաներից, վորոնց յեռաչափ պատկերավորելը յերեխաների համար ավելի հեշտ է, հետո անցնել ուղղանկյունածև պարզագույն առարկաներին:

Բնականից ուրվագծելու համար վոչ խոշոր առարկաների հետ զուգընթաց, անպայման պետք է տրվեն նաև ուղղանկյունածև խոշոր առարկաներ (արկղ, ճամբուկ), վորտեղ զուգահեռ գծերի թվացող մոտեցումը հեշտ կլինի տեսնել: Չափազանց ոգտակար է նաև միևնույն առարկան տարբեր դիրքերով ուրվագծելը. դա ոգնում է պարզելու առարկայի մակերևութների և անկյունների տեսանելի փոփոխությունները, վորոնք կախում ունեն նկարողի նկատմամբ առարկայի ունեցած դիրքից: Առարկաների խումբը բնականից նկարելը նույնպես պետք է վերլուծությունից սկսել:

Հարցերի միջոցով, ուսուցիչը պետք է յերեխաներին ոգնի խմբի միջի առարկաները միմյանց հետ համեմատելու և պարզելու՝ թե՞ վոր առարկան ավելի մեծ է, վորն ավելի փոքր, վորն ավելի հեռու յի, վորն ավելի լուսավոր, վորն ավելի խավար: Առանձին առարկաների ուրվագծումները բնականից և դիտողութայամբ կարելի յի կատարել ուղղակի մատիտով և ապա գունավորել:

Վորպեսզի բնականից նկարելու համար զրված առարկաների խումբն ամբողջ դասարանին ավելի լավ տեսանելի լինի, հարկավոր է անպայման դասարանում ունենալ միատեսակ առարկաների 2—3 խումբ, վորոնք կարելի կլինի դասավորել դասարանի զանազան մասերում:

Մարդու ուրվագծումը բնականից, վորպես տարրական դպրոցի աշակերտների համար շատ դժվար և բարդ ձև, սիստեմատիկ կերպով սկսվում է 5-րդ դասարանից:

Տարրական դպրոցում մարդու նկարումը տարվում է հիշողութայամբ՝ զանազան թեմաների շուրջը կատարած աշխատանքում: Ընդ ամին անհրաժեշտ է, վոր ուսուցիչը յերեխաներին դրդի դիտելու մարդուն, նրա կազմությունը, մարմնի մասերի փոխհարաբերություններն ըստ մեծության, բնորոշ շարժումները, վոր և կոգնի տարրական դպրոցի աշակերտներին 4-րդ դասարանում մարդ պատկերել, նրա Ֆիզուրայի ընդհանուր մասերի համեմատական հարաբերությունների վերարտադրությամբ:

Պարզագույն վարժությունների կատարումը և նախշերի

կազմումը նպատակ ունի զարգացնելու չափի և գույնի զգացումը, ստեղծագործական ընդունակությունները և սրա հետ միաժամանակ մատիտով աշխատելու տեխնիկան, և նախնական ունակություններ տալու՝ ներկերով աշխատելու համար:

Առաջադրությունները կատարվում են մատիտով և ներկերով, ըստ ուսուցչի նկարագրության (ուսուցիչը գրատախտակի վրա նախապես ցույց է տալիս), իսկ հետո արդեն նման վարժություններ կատարում են իրենք սովորողներն ինքնուրույնաբար: Այս պարզ նախշերից նրանք հեշտությամբ կանցնեն ծաղիկներից, բույսերից և այլն, նախշեր կազմելուն, վոր մըտցվում են կարչության ծրագրի մեջ 3-րդ դասարանից:

Առաջադրությունը բացատրելիս ուսուցիչը պետք է յերեխաներին պատմի նախշի առանձնահատկությունների, նրա նշանակության մասին (կտոր, պաստառ, հագուստի զարգարանքներ):

Շրիֆտի աշխատանքը կատարելով, յերեխան 4-րդ դասարանում պետք է սովորի ամենահասարակ պրիոմներով՝ ձողիկի ողնությամբ կամ ցանցի մեջ տառեր գծել և գրել (ձողաձև կամ ժապավենաձև շրիֆտով, վորը կատարման համար ամենից պարզը և գյուրընթեռնելին է):

Այս աշխատանքի համար ուսուցիչը պետք է պատրաստի ուսումնական և դիտողական մի քանի պարագաներ՝ ձողաձև շրիֆտով իր գրած տառերի և առանձին բառերի նմուշներ, սովորաթղթի կամ հաստ թղթի ուղղանկյունիներ՝ տառային վանդակներ գծելու համար, ինչպես նաև ձողիկներ, վորոնցով գրծվում է տառը (ձողիկի բարձրությունը պետք է հավասար լինի տառի բարձրությանը, իսկ լայնությունը՝ տառերի գծերի հաստությանը):

Պլակատի վրա նկարը պետք է կազմված լինի 2--3 պարզագույն առարկաներից, վորոնք համապատասխանում են պլակատի բովանդակությանը: Ամենից լավ է, պլակատի համար վերցնել այն առարկաները, վորոնք յերեխաները նկարել են բնականից և լավ ծանոթ են: Որինակ՝ «Հետևիք մաքրությանը» պլակատի վրա՝ ջրաման, ոճառ, ատամի փոշու տոպի, ատամի խոզանակ և այլն:

Չանագան թեմաներով նկարչություն պետք է տարվի բոլոր դասարաններում: Այդպիսի նկարչությունը դաստիարակում է յերեխայի ստեղծագործական ընդունակությունները,

վարժեցնում է նրան դիտել, իրեն հաշիվ տալ իր տեսածի նկատմամբ, հարստացնում է յերեխայի պատկերացումները, միավորում և ամրապնդում նրա ձեռք բերած հատություններն ու տեխնիկական ունակությունները: Բացի այդ, առարկաների և յերեռչիների կապակցված նկարելն ոգնում է աշակերտներին ճիշտ պատկերել առարկաները տարածության մեջ և վերաբարդել նրանց փոխհարաբերություններն ըստ մեծության:

Սրա հետ միասին, թեմաներով նկարչությունը սովորեցնում է յերեխային իր բազմաթիվ պատկերացումներից գիտակցորեն ընտրելու հատկանշական մոմենտներ ու առարկաներ, կապ հաստատելով նրանց մեջ՝ պատկերելիք առարկաների բովանդակությունն ամենալիակատար կերպով լուսաբանելու համար:

Ըստ թեմայի նկարելուց առաջ ուսուցչի գրույցը յերեխաներին պետք է ոգնի պատկերավորման համար ամենահատկանշական մոմենտներ ու առարկաներ ընտրելուն և ոժանդակ հարցերի միջոցով յերեխաներին հարկադրի վերհիշելու և պատկերացնելու առարկաների այն ձևը, գույնը և բնորոշ հատկանիշները, վորոնք յերեխան պետք է պատկերավորի՝ պարզելու, թե ինչն էր ավելի մեծ, ինչը՝ փոքր, ինչն ավելի հեռու, ինչը՝ մոտիկ: Ցանկալի յե գրական յերկի վորևե հատվածի ընթերցում, վորը բարձրացնում է յերեխայի հետաքրքրությունն առաջադրվող թեմայի նկատմամբ և դեպի այն եմոցիոնալ վերաբերմունք է ստեղծում:

Համապատասխան թեմատիկա ընտրելիս այն բաժինը մեծ նշանակություն ունի սովորողների իդեական-քաղաքական դաստիարակության հարցում: Թեմաների ընտրությունը պետք է համապատասխանի յերեխաների տարիքին, պետք է ըստ հնարավորության լայնորեն ընդգրկի նրանց հետաքրքրություններն ու գիտելիքները և յերեխաներին լավ ծանոթ առարկաների պատկերավորում պահանջող թեմաներից անցնի՝ տարածության, բարդ գործողությունների ու շարժման մեջ գտնվող մարդկանց խմբերի պատկերավորում պահանջող թեմաներին:

Բովանդակությունը կարելի յե վերցնել հանրակրթական առարկաներից (գրականությունից, աշխարհագրությունից, բնագիտությունից և այլն):

Համադպրոցական եքսկուրսիաները է գրասանքները կարող են ծառայել, վորպես հիանալի թեմա հիշողությամբ նկարելու համար:

Երբ սկսեցին լինել և գրոսանքների ժամանակ ուսուցիչը պետք է յերեխաների մեջ դարգացնի առարկաներն իրար հետ բազմապատկեր, նրանց մեծութունը, ձևի և գույնի բնորոշ առանձնահատկութիւնները համեմատելու ունակութիւն, վորը կոզնի ճշտելու տեսողական պատկերացումներն առարկաների վերաբերյալ և կնպաստի նրանց ավելի ճշգրիտ և լրիվ պատկերավորելուն:

Անհրաժեշտ է սխտեմատիկորեն աշակերտների ուշադրութիւնը կենտրոնացնել առարկաների՝ դիտողից հեռացնելուց կախած՝ թվացող փոփոխութեան վրա (առարկաների փոքրանալը և գուգաննո գծերի փոխակերպումը): Վորը կոզնի յերեխային երկարում տալ տարածական ճիշտ կառուցում:

Նկարները կարելի չէ կատարել դունավոր մատիտով, ջրաներկով: Գույնների կոմպլեկտը, վոր ստանում են յերեխաներն իրենց աշխատանքի համար, պետք է հետզհետե ընդարձակել: 1-ին դասարանում չպետք է ընտրել վեց գույնից ավելի (կարմիր, դեղին, կապույտ, կանաչ, սև և նարնջագույն):

Այն պահանջները, վոր առաջադրվում են յերեխաներին, նրանց թեմատիկ նկարների գնահատման ժամանակ, չպետք է գերազանցեն տվյալ դասարանի համար ծրագրերում մատնանշված հմտութիւնների և ունակութիւնների ծավալից:

Անհրաժեշտ է յերեխաներին բացատրել նկարչութեան կանոններն ու աշխատանքի ձևերը: Այսպես որինակ՝ գծերի հորիզոնական և ուղղաձիգ ուղղութիւնները ստուգում են թղթի հորիզոնական և ուղղաձիգ յեզրերով: Յերեխաներին պետք է բացատրվի տարածութիւնը վերարտադրելու յիզանակները յուրաքանչյուր դասարանի հմտութիւնների և ունակութիւնների սահմաններին համապատասխան՝ թղթի թերթի վրա առարկաներն ավելի վերև և ավելի ներքև, յետ և առաջ դասավորելը, հեռավոր առարկաների փոքրացումը:

Նկարչութեան դասը, այնպես ինչպես նաև ամեն մի առարկայի դաս, պետք է մեծ ինամքով մտածված և կազմակերպված լինի: Յուրաքանչյուր դաս կազմվում է հետևյալ մոմենտներից՝ ուսուցչի կողմից առաջադրանքի պարզաբանումը, նկարչական պարզանքի բաժանումը, յերեխաների անհատական աշխատանքն առաջադրանքի վրա, ուսուցչի կողմից նայելը և ոգնելը յերեխաներին կատարման պրոցեսում, ուսուցչի կողմից կատարման գնահատման յեզանակներ և տեխնիկական պրիոմներ ցույց տալը, գրատախտակի վրա առանձին առաջադրանքների կատարումը:

առանձին աշխատանքների նայումը և քննարկումը՝ տիպիկ սըխալների պարզաբանումով:

Առաջադրանքներ կատարելու ժամանակ, ուսուցիչը պետք է յերեխաներին ցույց տա տեխնիկական անհրաժեշտ ոգնութիւն, ցույց տալով, թե ինչպես պետք է մատիտը բռնել, վրձինով աշխատել, ներկերից ոգովել, ինչպես նստել, թուղթը բռնել: Աշխատանքի պրոցեսում նա պետք է ուշադրութիւն դարձնի թղթի վրա նկարը ճիշտ դասավորելու վրա (հարկավոր է նկարն այնպես դասավորել, վոր բոլորը տեղավորվի և, միաժամանակ, թուղթն ամբողջովին ոգտագործված լինի):

Յերեխաներին ցուցումներ տալիս, պետք է հաշվի առնել այն հմտութիւնները և ունակութիւնները, վոր նախատեսված են ծրագրում: Որինակ՝ ունակութիւններից մեկը, վորը պետք է տիրապետեն 1-ին դասարանի բոլոր աշակերտներն ուսումնական տարվա վերջում, դա՝ ուղղանկյունագծային ձև նկարելիս հորիզոնական և ուղղաձիգ գծերի ուղղութիւնը ճիշտ վերարտադրելու հմտութիւնն է: Ուստի ուսուցիչը պետք է աշխատանքի պրոցեսում սխտեմատիկաբար յերեխայի ուշադրութիւնը հրավիրի այն բանի վրա, վոր ուղղանկյուն առարկաները (դուռը, սունը, ցանկապատը) կանգնած լինեն, չընկնեն, այսինքն՝ յերեխան ըստ հնարավորութեան տա ուղղաձիգ և հորիզոնական գծեր և վոչ թե կոր կամ թեք գծեր: Նույնն անհրաժեշտ է անել 3-րդ դասարանում, տարածութեան յերեւոյթները՝ առարկաների մեկը մյուսի հետև դասավորել, զանազան նախագծեր (առարկաների խմբեր՝ բնականից կատարած նկարների մեջ), առարկաների փոքրացում և հորիզոնականների փոփոխութիւններ (սյուժետային նկարում) վերարտադրելու առնչութեամբ: Մի շարք պրիոմներ պետք է ցույց տա անմիջապես ինքն ուսուցիչը, որինակ՝ ինչպես սկսել առարկաներ նկարելը, ինչից սկսել, ինչպես և ինչ հաջորդականութեամբ կատարել աշխատանքը և այլն, ինչպես ձեռնամուխ լինել շրիֆտի նկարմանը և որնամենտի կառուցմանը՝ ամենահասարակ ելմանտներից (գծերից, կետերից, կիսաշրջաններից): Շրջագծերի նկարումը, առարկայի մակերևութիւնների փոփոխումները՝ կախված նկարողի նկատմամբ նրանց ունեցած դիրքից (բնական առարկաների մեջ շրջագծի կրճատում), թղթի վրա մի խումբ առարկաներ դասավորելը և այլն—այս բոլորը ուսուցչից պահանջում են անհրաժեշտ ցուցումներ և ցուցադրում:

Անհրաժեշտ է հնարավորութիւն տալ իրենց՝ սովորողներին

գրատախտակի վրա նկարելու գրատախտակի վրա նկարելը մեծ բազմապիսուսություն կմտցնի դասերի մեջ և աշակերտներին կվարժեցնի գրատախտակի վրա մեծ չափերով աշխատելու, վորը չափազանց ոգտակար է ձեռքի և աչքի զարգացման համար:

Գրատախտակի վրա յերեխաների կողմից հերթականութան կարգով կարող է կատարվել առանձին առարկաների ուրվագծում, ընդ վորում գրատախտակի վրա կատարված աշխատանքի գնահատականն ուսուցիչը կարող է տալ հենց այդտեղ՝ դասարանում, վորը կոգնի յերեխաներին պարզելու իրենց սխալներն ու թերութունները:

Մեծ նշանակություն ունեն դասարանում ավարտած աշխատանքների դիտումն ու քննարկումը: Այդ նպատակով, աշակերտների կողմից առաջադրանքները դեռ կատարելու պրոցեսում, ուսուցիչը պետք է ընտրի և հետո վերցնի, ինչպես բացասական, այնպես և դրական ամենաբնորոշ աշխատանքները:

Նկարները պետք է գնահատվեն ուսուցչի կողմից նախ և առաջ այն ունակությունների և հմտությունների տեսակետից, վորոնք նախատեսված են ծրագրով, ինչպես նաև սյուժեին լուսաբանելու տեսանկյունից (կարողացել է արդյոք յերեխան պատկերավորման համար ընտրել ամենաբնորոշ մոմենտներն ու առարկաները, կարողացել է արդյոք դասավորել նրանց) և տեխնիկական տեսակետից (նկարները արդյոք խնամքով և մաքուր են կատարված):

Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել ուսումնական նյութին ըստ ժամանակի բաշխելու վրա (բոլոր տեսակի աշխատանքները, վորոնք նախատեսված են տվյալ դասարանի համար, կատարվում են ամբողջ ուսումնական տարվա ընթացքում):

Ծ Ր Ա Ք Ի Ր

Առաջին դասարան

1. ԱՌԱՆՁԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՆԿԱՐՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ (17 ժԱՄ)

Ուսուցիչը ցույց է տալիս աշակերտներին այն առարկան, վորը նրանք պետք է նկարեն, և յերեխաների հետ միասին քննում է առարկայի ձևը, թվարկում է առարկայի մասերը, աշակերտների ուշադրությունը հրավիրում է առարկայի մասերի համեմատական մեծությունների վրա (ի՞նչն է ավելի մեծ, ի՞նչն ավելի փոքր, ի՞նչպես է առարկայի բարձրությունը լայնությունից հետ համեմատվում): Զրույցում պարզվում է նաև առարկայի բնորոշ գույները:

Առարկայի ձևն ու գույնը ցույց տալուց և դրանց մասին զրուցելուց հետո, ուսուցիչն աշակերտներին առաջարկում է նկարել առարկան:

Աշխատանքի ժամանակ աշակերտները կարող են իրենք կամ ուսուցչի առաջարկությամբ կրկին դիտել առարկան, վորպեսզի առարկայի ձևն ու գույնը նկարում ավելի լավ վերարտադրեն:

Աշխատանքի այդպիսի ձևը կոչվում է նկարչություն դիտողությունյալ և նպատակ ունի վարժեցնել աշակերտներին գննելու առարկաների ձևը, նաև տալ աշակերտներին ուղիղ, ուղղաձիգ, հորիզոնական և պարփակված կոր գծեր նկարելու ունակություններ:

Աշխատանքը տարվում է սև և գունավոր մատիտներով կամ ներկերով:

Առաջինների ցուցակ՝ բոլոր դիտողության նկարելու համար

1. Բանոն, փակ տետրակ (չափիկի վրան պիտակ կպցրած), ծրար, թղթապանակ, չոտանների թղթապանակ:
2. Ներկատախտակ ստվարաթղթից, ուղղանկյունի ու ձվաձև:
3. Տերևներ (բարդենու, յասամանու, լուխենու և այլն):

4. Ճյուղեր (հասարակ ձևի փոքրաթիվ տերեւներով, որինակ՝ բարդենու ճյուղ, յասամանու ճյուղ, թանթրվենու ճյուղ):

5. Խնձոր, տանձ, սալոր:

6. Շաղգամ, պամիդոր, վարունգ:

7. Զանազան ձևի շաքարամաններ:

8. Գավաթ, բաժակ, թաս:

9. Խաղալիքներ՝ դուլլիկ, բահիկ, գնդակ և այլն:

10. Ճակնգեղ, բողկ, գազար:

11. Խնձոր, ձու, վարունգ, գազար (առարկանների բնորոշ ձևի վերարտադրման առաջադրանք):

12. Զմերուկ և խնձոր: Դրում և վարունգ (համեմատական մեծութունների վերարտադրման առաջադրանք):

Վերոհիշյալ բոլոր առաջադրանքները բաշխվում են ամբողջ տարվա վրա և կատարվում են ըստ հնարավորության խոշոր չափերով՝ մեկ եջի վրա 2—3 առարկա:

2. ԴԵԿՈՐԱՏԻՎ ԱՇԽԱՏՆԵՐ (10 ժԱՄ)

Դեկորատիվ աշխատանքը, վորպես զանազան նախշեր կազմելու վարժութիւններ, անց է կացվում յերեխաների ստեղծագործական ընդունակութիւնները, նրանց տարրական տեխնիկական ունակութիւնները մատիտով և վրձինով աշխատելու մեջ զարգացնելու նպատակով, այն է՝ ուղիղ գծեր, ուղղանկյուններ, շրջագիծ նկարել, նախշի մասերը հերթափոխել, նաև գույները, օրինակ՝ սպիտակ, սև, կապույտ, կարմիր, դեղին, կանաչ, նարնջագույն, դարչնագույն, վորոշել և ձեռտ անվանել:

Որինակելի առաջադրանքներ

ա) Նախշած յերիզ (գրքերի մեջ նշան դնելու համար):

բ) Շրջանակ՝ զանազան մեծության ու գույնի, մեկը մյուսի վրա ընկած շրջաններից կազմված նախշերով, տետրակի յերեսը կամ շապիկը զարդարելու համար:

գ) Շրջան, վորը ծածկված է կենտրոնի շուրջը դասավորված զանազան մեծության շրջաններից և բեկյալ գծերից բաղկացած նախշով:

դ) Քառակուսի, վորը ծածկված է նախշով (հատվող անկյունագծեր, ուղիղ, բեկյալ գծեր և շրջաններ):

Յուրաքանչյուր առաջադրանքին մեկ ժամ է տրվում: Առաջադրանքներ կատարվում են նիստ ուսուցչի քված օրինակով:

Հաջորդ դասին սովորողները միևնույն տարրերից ինքնուրույնաբար կատարում են նախշ մատիտներով կամ ներկերով:

3. ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ (12 ժԱՄ)

ՅԼրեխաների իրենց ընտրած թեմաներով նկարչութիւնը (2 ժամ) և ուսուցչի տված թեմաներով նկարչութիւնը (10 ժամ) նպատակ ունի վարժեցնել յերեխաներին դիտելու իրենց շրջապատող իրականության մեջ գտնվող առարկաները, համեմատել նրանց իրար հետ, գասավորել թերթի վրա, գտնել և պատկերավորել նրանց բնորոշ հատկանիշները:

Բացի այդ, թեմաներով նկարչութիւնը տարվում է աշխատանքի մյուս բաժիններում ձեռք բերած ունակութիւններն ամրապնդելու նպատակով:

Թեմաները պետք է վերցնել շրջապատող իրականութիւններից և գրականութիւններից:

Աշխատանքը կատարվում է մատիտով, ջրան՝րկերով, գուճավոր մատիտներով:

Որինակելի թեմաներ

1. Յերեխաների ամառվա կյանքի հետաքրքրական մոմենտներն ըստ իրենց ընտրության. որինակ՝ նավակով զբոսանքը, անտառում հանդիպում վոզու, նապաստակի, սկյուռի և այլ կենդանիների:

2. Կոլտնտեսութիւնի բերքը (հավաքած բերք՝ մրգեր, բանջարեղեն և այլն):

3. Աշունը՝ դեպի անտառը, պուրակը, այգին կամ վորևե գրոտավայր կատարած եքսկուրսիայից կամ զբոսանքից ստացած սովավորութիւնների ուրվագծում:

4. և 5. Գյուղը և քաղաքը: Քաղաքային և գյուղական զանազան շենքերի՝ գործարանի, մեծ բնակելի տան, կոոպերատիվի, դպրոցի, կինոյի և այլն, կամ գյուղխորհրդի, ակումբի, բնակելի տան, անասանոցի և այլ շենքերի բնորոշ հատկանիշների վերարտադրութիւն: Փողոցը պատկերավորվում է վոշ խորուքյալք, նրա միայն մի կողմն է նկարվում:

6. Հոկտեմբերյան սոնը՝ զարդարված քաղաքը, յերեխաների զբոսանքն ավտոմոբիլներով:

7. Առաջին ձյունը: Նկարը կատարվում է գունավոր թղթի վրա, գունավոր մատիտներով ու կավճիկներով:
8. Զմռան անտառուժ:
9. Յեղևնի (տոնածառ):
10. Հեքիաթներ, պատմություններ կենդանիների և թռչունների մասին:
11. Գարուն, թռչունների գալը:
12. Ծաղիկներ:

Հմտություններ և ունեցություններ

1. Կարողանալ, նկարելիս ճիշտ նստել, մատիտը բռնել, թուղթը դնել, վրձինով և մատիտով աշխատել:
2. Կարողանալ ճիշտ նկարել հորիզոնական և ուղղաձիգ գծեր:
3. Կարողանալ, պարզ կորագիծ ձևի առարկա (գնդակ, խրճուճոր, վարունգ, ձու) նկարելով, տալ պարփակված կորագիծ և վերարտադրել նրանց հիմնական դժային ձևը:
4. Կարողանալ վերարտադրել նկարվող առարկայի լայնություն և յերկարություն հիմնական փոխհարաբերություններն ըստ մեծություն:
5. Կարողանալ թղթի վրա նկարը տեղավորել, հաշվի առնելով թղթի չափն ու ձևը:
6. Կարողանալ զանազանել և ճիշտ անվանել գլխավոր գույները (սպիտակ, սև, կապույտ, կարմիր, դեղին, կանաչ, դարչնագույն, նարնջագույն):
7. Կարողանալ խնամքով գունազարդել ըստ յեզրագծի:

Յ ե ր կ ր ո ր Գ ղ ա ս ա ր ա ն

1. ԱՌԱՆՁԻՆ ԱՌԱՐԿՍՆԵՐ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՄԲ ՆԿԱՐԵԼԸ (19 ժԱՄ)
- I դասարանի հմտությունների և ունակությունների խորացում և ամրապնդում:
- Նկարները կատարվում են սև, գունավոր մատիտներով ու ներկերով:
- Առարկաների ցուցակը դիտարկելու և նկարելու համար
1. Ուռենու, կաղնու, թղկենու տերևներ:
 2. Տերևներով ճյուղեր:
 3. Պարզ ձև ունեցող խոշոր ծաղիկներ՝ (կտրված), բարձրանաձողիկ (հարսնամատ), մանուշակ:

4. Զանազան ձևերի խնձորներ ու տանձեր:
5. Ճակնդեղ, տաքաեղ, կաղամբի դլուխ (սովորական և գունավոր):
6. Սպիտակ սունկ, դեղնագույն-թուևավոր սունկ և այլ սնկեր:
7. Աղեղավոր սզոց (սխտ), լորդիկ (նրբասզոց):
8. Մուրճ, մետաղասզոց, իզմիր կամ դուր:
9. Զանազան ձևի պուլիկներ:
10. Խաղալիքներ՝ գնդակ, դուլբեր (ներքևում նեղացող), հուր:
11. Գավաթ, թաս, սափոր:
12. Թեյաման, կաթնաման, սրճաման:
13. Ծաղկաման:
14. Խաղալիքներ՝ կենդանիներ և թռչուններ, որինակ՝ սկյուռ, նապաստակ, խոզ, փիղ, բաբ, աքաղաղ:

2. ԴԵԿՈՐԱՏԻՎ ԱՇԽԱՏՍՆԻՔ (8 ժԱՄ)

Նախշեր կազմել և կատարել զանազան վարժություններ մատիտով ու ներկերով աշխատելու տարրական տեխնիկական ունակություններ զարգացնելու համար. կարողանալ զուրբից, կետերից և շրջանակներից բաղկացած պարզագույն նախշով ծածկել ուղղանկյունին, քառակուսին և շրջանը, համաչափորեն հերթափոխելով նրանց (ամենահասարակ ութթմ), կազմակերպել շրջանի մեջ կենտրոնը, քառակուսու մեջ անկյունները: Կարողանալ՝ ջրաներկով հավասար գունավորել վոշ մեծ հարթություն և հիմնական գույները (կարմիր, կապույտ, դեղին) խառնելու միջոցով ստանալ նոր գույներ:

1. Նկարել առանց քանոնի փոքրիկ քառակուսի, ուղղաձիգ գծով (աչքաչափով) կիսել այն և ստացված յուրաքանչյուր կեսը դարձյալ կիսել ձիշտ այդպես ել անցկացնել հորիզոնական գծեր: Ստացած ցանցի քառակուսիները զարդարել տարբեր գույնի կետերով կամ շրջաններով: Առաջադրանքը կատարվում է գունավոր մատիտներով:
2. Յերեսխանների կողմից զանազան նախշեր, ցանցեր կազմել և նրանցով քառակուսու լցնելը:
3. Յերիզի նկարելն առանց քանոնի (յերկու գուգահեռ գծերի անցկացում) և նցա զարդարելը մանր շրջանների և քառակուսիների համաչափ հերթափոխումով (մեծ շրջան, փոքր քառակուսի):

աակուսի): Առաջադրանքը կատարվում է մատիտով ու ներկերով:

4. Յերեխաների կողմից յերիզի համար նախշի կազմում:
5. Փոքր մակերևանների (շրջանների կամ ուղղանկյունների) հարթ գունավորման վարժություն:

6. Յերիզի համար նախշեր, վոր կազմում են յերեխաները կրկնվող ծաղիկներից և տերեւներից:

7. Հիմնական գույներից նոր գույներ (նարնջագույն, կանաչ, մանուշակագույն) կազմելը—կարմիրը և դեղինը (նարնջագույն), կապույտն ու դեղինը (կանաչ), կարմիրն ու կապույտը (մանուշակագույն) խառնելու միջոցով և զբանցով փոքրիկ հարթություններ գունավորելը:

8. Շրջանի (բաժակափսեներ) նախշ, վորը կազմում են յերեխաները ծաղիկներից:

1-ին և 3-րդ առաջադրանքները կատարվում են ճիշտ ուսուցչի ցույց տված որինակով:

3. ԹԵՄԱՆԵՐՈՎ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ (12 ժԱՄ)

Աշակերտների կողմից ընտրած թեմաներով նկարչություն (2 ժամ) և ուսուցչի կողմից ընտրած թեմաներով հիշողությամբ ու յերեխայությամբ նկարչություն (10 ժամ) կատարվում է այն նպատակով, վոր սովորողները վարժվեն դիտելու իրենց շրջապատի իրականության առարկաները, համեմատեն նրանց, տեսնեն և նկարում վերարտադրեն առարկաների փոխհարաբերություններն ըստ մեծության (տունը մեծ է մարդուց, կենդանին փոքր է ծառից և այլն) և նրանց ընտրող հատկանիշները:

Չանազան թեմաներով նկարչությունը կատարվում է նաև աշակերտների մյուս բաժիններում կատարած աշխատանքների ընթացքում ձեռք բերած ունակություններն ամրապնդելու նպատակով:

Թեմաները պետք է վերցնել շրջապատի իրականությունից և գրականությունից:

Նկարները կատարվում են մատիտով, ջրաներկով և գունավոր մատիտներով:

Որինակի թեմաներ

1. Պտղատու այգի:
2. Մմառը գետի վրա:
3. Բանջարեղենի կրպակ կամ անփուր փողոցում:

4. Եքսկուրսիա կամ գրոտանք դեպի այլի, պուրակ անտառ:
5. Պատմվածքների իլյուստրացիա:
6. Թռչնոց:
7. Ջրային տրանսպորտ:
8. Պուշկինի, Հ. Թումանյանի, Դ. Աղայանի հեքիաթների իլյուստրացիա:
9. Ծաղկավաճառման կրպակ կամ խանութ:
10. Գարնան անտառում:

Հմտություններ և ունակություններ

1. Կարողանալ նկարում վերարտադրել առարկաների մեծություն հիմնական ընտրող փոխհարաբերությունները:
2. Կարողանալ վերարտադրել պարզագույն առարկաների հիմնական ընտրող գծային ձևը:
3. Կարողանալ համաչափ հերթափոխվող (պարզագույն ության) գծերից, կետերից և շրջանակներից բաղկացած պարզագույն նախշով լցնել շրջան, քառակուսի, ուղղանկյունի:
4. Կարողանալ հիմնական գույներից ստանալ նոր գույներ ներկերը խառնելու միջոցով:

Յերուրդ դասարան

1. ԱՌԱՆՁԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՆԿԱՐՈՒՄԸ ԲՆԱԿԱՆՑ (19 ժԱՄ)

Սովորողները նկարում են իրենց առաջ զբաղված առարկան, այնպես, ինչպես տեսնում են իրենց ազդից:

Բնականից նկարելն իր առաջ խնդիր է դնում՝ սովորեցնել աշակերտներին՝ նիստ պատկերել առարկաների բնորոշ ձևավայլի մեջ՝ գծայնորեն, տուանց լուսաստվերի, վերադարձելով գլանան առարկաների մեջ՝ օրջանի, իսկ ուղղանկյունաձև առարկաների մեջ՝ եզրագծերի հեռանկառային փոփոխություններ, հասկի տուներով բրթի բերթի չափը և նկարել առարկաները համապատասխան մեծությամբ:

Առարկաների որինակի ցանկ

1. Խաղալիքներ՝ գնդակ, հուր:
2. Բանջարեղեններ ու մրգեր:
3. Բանկաներ, բաժակներ և գավաթներ զանազան մեծությամբ ու ձևի:



3604
40

4. Չանազան ձևի պուլիկներ:
5. Նավթաման, շիշ:
6. Դույլիկ և ցնցուղ:
7. Սափոր, կաթսա:
8. Սրճաման, կաթի աման:
9. Թեյաման, գավաթ, շաքարաման:
10. Չանազան ձևի տուփեր, ճամբրուկ, արկղ և գերք:
11. Ակվարիում:
12. Ծաղիկներ, ճյուղեր, տերևներ (ձևով հասարակ ու խոշոր):
13. Բույս ծաղկամանում:

2. ԴԵԿՈՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (8 ԺԱՄ)

Այս բաժնի առաջադրանքների կատարումը 3-րդ դասարանում խնդիր է դնում ամրապնդելու և խորացնելու նախորդ դասարանում մատիտով ու ներկերով աշխատանքի մեջ յերեխաների ձեռք բերած հմտությունները և ունակությունները: Ներկերով աշխատանքի ունակությունները զարգացնելու համար աշակերտներին արվում են զանազան վարժություններ, որինակ, միևնույն գույնի (կարմիր, կապույտ և գորշ) յերանգների ընտրությունը սկսած ամենամուգից մինչև ամենաբացը (4—5 յերանգի սահմաններում) և զրանցով փոքրիկ հարթություններ ծածկելու և նախշեր կազմելու առաջադրանքներ:

1. Ծաղիկներից և տերևներից կազմած նախշով շրջանի լցում:
2. Մրգերից և հատապտուղներից կազմած նախշերով շերտի լցում (սենյակը զարդարելու համար):
3. Յերեխաների ընտրած որյեկաները նախշ կազմելը գույնի համար:

3. ՇՐԻՖՏ (4 ԺԱՄ)

Շրիֆտի աշխատանքը տարվում է աշակերտների աչքաչափը զարգացնելու, պատրաստի ձողիկի ողնություններ ատուր նկարելու, թերթի վրա փոքրիկ մակագրություններ տեղավորելու և յեզրագծով ներկելու հմտություն ձեռք բերելու նպատակով:

- ա) Տառերի գծագրումը ուղղանկյան և սովորաթղթից պատրաստած ձողիկի ողնություններ:
- բ) Տառերի գունավորումը:

գ) Փոքրիկ մակագրությունների կազմում (պատի թերթի վերնագրերը, տետրակի, գրքի շապիկի վրա գրելը):

4. ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԹԵՄԱՅՈՎ (8 ԺԱՄ)

Թեմատիկ նկարչությունը խնդիր է դնում սովորեցնել աշակերտներին զիտել շրջապատի իրականությունը և առաջադրված թեմայից ընտրել բնորոշ մոմենտն ու թեման արտահայտող գլխավոր առարկաները, ճիշտ վերարտադրել առարկաների հիմնական համեմատական չափերը, և վերարտադրել տարածությունը՝ թղթի վրա առարկաներն ավելի ցած կամ ավելի բարձր, հետ և առաջ պատկերավորելու միջոցով, հաշվի առնելով հորիզոնի գիծը:

Աշխատանքները կատարվում են մատիտով ու ներկերով: Նկարչություն աշակերտների ընտրած թեմաների շուրջը (2 ժամ) և ուսուցչի առաջարկած թեմաներով (6 ժամ):

Որինակների բեմաճեք

1. Ավիացիայի որը:
2. Մակի հավաքում անտառում:
3. Անձրևոտ որ:
4. Մեր նորակառույցները:
5. Իլյուստրացիաներ հեռավոր յերկրների վերաբերյալ պատմվածքների շուրջը:
6. Իլյուստրացիաներ կրկնվի, Աթարեկ Խնկոյանի առակների:
7. Իլյուստրացիաներ Պուշկինի, Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի հեքիաթների:
8. Սառցի բացվելը:
9. Գարնան խաղ բաց ողն (թղթե ողապարիկ բաց թողնելը):

Հմտություններ և ունակություններ

1. Կարողանալ պատկերել առարկաների ծավալային բնորոշ ձևը (գծելով) և նրանց մասերի հիմնական համեմատականությունները, վերարտադրելով հարթությունների (շրջանի, յիստերի) հեռանկարային փոփոխությունները:
2. Բնական յց և զիտողություններ ուրվագծելու կարողանալ:

գիտակցորեն դասավորել առարկաները թղթի թերթի վրա և նը-
կարել նրանց համապատասխան մեծությամբ:

3. Կարողանալ ընտրել առարկաների բնորոշ գույներ:

4. Կարողանալ վերարտադրել առարկաների մեծություննե-
րի բնորոշ հարաբերությունները:

5. Թեմաներով նկարելիս կարողանալ ընտրել այն մոմենտ-
ները, վորոնք ամենից ավելի յեն լուսաբանում թեման և կարո-
ղանալ վերարտադրել տարածությունը՝ առարկաները հետ և ա-
ռաջ, ավելի մոտ կամ ավելի հեռու (ավելի ցած ու ավելի բարձր)
դասավորելու միջոցով:

Չորրորդ դասաբան

1. ԱՌԱՆՋԻՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՅԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԽՄԲԵՐ ԲՆԱԿԱՆԻՑ ՆԿԱՐԵԼՐ (25 ժԱՄ)

Բնականից նկարելու նպատակն և սովորեցնել առարկանե-
րի հիմնական ծավալային ձևը գծայնորեն ու լուսաստվերով
(լույս, կիսաստվեր, ստվեր) ճիշտ վերարտադրել նկարի մեջ, նաև
վերարտադրել առարկաների հիմնական հեռանկարային փոփոխու-
թյուններն ու նրանց բնորոշ գույներ:

Առարկաների խումբ նկարելիս խնդիր և զբոլում ճիշտ վե-
րարտադրել նախագծեր՝ մի առարկան մյուսից ավելի մոտ և ա-
վելի հեռու, հետ և առաջ:

Որինակելի ցուցակ մտախօսվ նկարելու համար

1. Բիդոն և թաս:
2. Թմբուկ կամ կլոր տուփ զանազան դիրքերով:
3. Սրճաման և գավաթ:
4. Չանազան ձևի սրվակներ և շշեր:
5. Արկղ—զանազան դիրքերով:
6. Բաց և փակ տուփ:
7. Թուչունների և մանր կենդանիների խրավիլակներ:
8. Ծաղկաման՝ բույսով և ցնցուղ:

Որինակելի ցուցակ մտախօսվ նկարելու համար

1. Բանջարեղեններ ու մրգեր:
2. Չանազան մեծության և գույնի խնձորներ (2 հատ) և
գավաթ:

3. Կալե պուլիկ, կարմիր տաքտեղ և վարունգ:
4. Կաթաս և կարտոֆիլ (մի քանի հատ՝ իրար մոտ, առ-
ջևից, կողքից):
5. Տուփ՝ ներկերով և բանկա՝ վրձիններով:
6. Թուչունների՝ խրավիլակներ:
7. Կտրած ծաղիկներ՝ վաղի կամ գավաթի մեջ դրած:

2. ԹԵՄԱՆԵՐՈՎ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ (8 ժԱՄ)

Թեմաներով նկարչությունը խնդիր և դնում սովորեցնել ա-
շակերտներին դիտելու շրջապատի իրականությունը, առաջարկ-
ված թեմայում ընտրել բնորոշ մոմենտները, պատկերավորելու
այն գլխավոր առարկաները, վորոնք լուսաբանում են թեման,
ճիշտ վերարտադրել առարկաների միջև հիմնական փոխադարձ
չափերը և վերարտադրել տարածությունը՝ հաշվի առնելով առար-
կաների հեռանկարային փոփոխությունները (փոքրացում) և
զուգահեռ հորիզոնագծերի փոփոխությունները:

Աշխատանքները կատարվում են մատիտով և ներկերով:

Որինակելի թեմաներ

1. «Պողբանջարեղեն»-ի խանութը (քաղաքում) կամ բան-
ջարեղենի կույտը կուլտանտեսության մեջ:
2. Իլյուստրացիա Պուշկինի, Հ. Թումանյանի, Դ. Աղայանի
հեքիաթների:
3. Իլյուստրացիա Հ. Թումանյանի «Դաշտ ու այգի» կամ
Նեկրասովի «Փոքրիկ գյուղացի» բանաստեղծությունների:
4. Յերկաթուղային կամուրջ:
5. Քաղաքային և գյուղական փողոց (խորությամբ):
6. Ճանապարհ անտառում:

3. ՆՐԻՖՏ (3 ժԱՄ)

4-րդ դասաբանում շրիֆտի աշխատանքը կատարվում է
այն նպատակով, վոր սովորողները վարժվեն իրենց գծած ցան-
ցում տառեր գրել՝ հաշվի առնելով տառերի հաստությունը, լայ-
նությունը և բարձրությունը, կատարել փոքրիկ մակագրություն-
ներ, զրանք ճիշտ սեղավորել թղթի թերթի վրա և կանոնավոր
կերպով գունավորել կոնտուրով:

- ա) տառերի գծերը ցանցի միջոցով:
- բ) փոքրիկ մակագրության նշագծում:

4. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԼԱՎՈՏ-ԱՂՅՈՒՍՅԿ (3 յՍՄ)

Կտարվում են աշակերտներին առանձին առարկաների նկարները և տվյալ թեմայով մակագրությունը թղթի թերթի վրա գ'տակցված կերպով տեղավորել սովորեցնելու նպատակով:

Պլակատ-աղյուսակի օրինակելի թեմաներ՝ «Սովորում ենք գ'րազանց», «Հեռերի մաքրության», «Ցուցակագրվիլը խմբակում»:

Հմտություններ և ունեցվածքներ

1. Կարողանալ պարզագույն և լավ ծանոթ առարկաների հիմնական ձևը՝ գծաչափերն և լուսաստվերով (լույս, կիսաստվեր, ստվեր) և նրանց բնորոշ գույնը վերարտադրել:

2. Կարողանալ հաշվի առնել և վերարտադրել առարկաների միջև յեղած հեռավորությունը (զանազան հատակագծեր՝ ավելի մոտիկ, ավելի հեռու, հետ և առաջ, ավելի հեռավոր առարկաների հեռանկարային փոքրացումը և հեռացող հորիզոնագծերի փոփոխությունները):

3. Կարողանալ վերարտադրել խմբի մեջ առանձին առարկաների մեծությունների փոխհարաբերությունը և առարկաների մեջ հիմնական մասերի չափերի փոխհարաբերությունը:

4. Կարողանալ թերթի վրա առարկաների խումբ տեղավորելիս մատիտով թեթև նախնական ուղղաչիծ նշել, հաշվի առնելով առարկաների հիմնական մեծություններն ու նրանց ձևը:

5. Թեմայով նկարելիս կարողանալ առանձնացնել զլխավորն ու բնորոշը և աչքի ընկնող ձևով տալ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0300090